# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 215-Ա

«26» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 23,03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,003389 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ մասի դրույթներով և հիմք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 13/6 հասցեի ավտոտնակի աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին» թիվ 63-Ա որոշումը և 2019 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանում կայացած աճուրդ վաճառքի արդյունքների վերաբերյալ հազմված աճուրդային հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 2 արձանագրությունը

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված համայնքային սեփականությունը հանդիսացող 08-010-0073-0020 կադաստրային ծածկագրով, 23,03 քառակուսի մետր անշարժ գույքի նոր հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ամասիա բնակավայր, 26-րդ փողոց, թիվ 13/6:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի, Ամասիա բնակավայրի, 26-րդ

փողոցի, թիվ 13/6 հասցեի 23,03 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N21082019-08-0028) և նրա կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած 08-010-0073-0006 կադաստրային ծածկագրով **0,003389** հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը **132000** (հարյուր երեսուն երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից՝ Արամ Մամիկոնի Խաչատրյանին (նույնականացման քարտ՝ 001239760, տրված՝ 05.09.2014 թվականին, 021-ի կողմից) և կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Պարտավորեցնել գնորդին՝

սահմանված ժամկետում վճարել գնված անշարժ գույքի արժեքը և գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«26» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա